ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ. Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.). ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1999, 477 էջ:

Հայ ժողովրդի XIX դարի պատմության հերոսական և ողբերգական էջերից են արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները, որոնք ցույց տվեցին մեր ժողովրդի պայքարի կորովը, հարատևելու անկոտրում կամքը և հավատքը: Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումն իր բնույթով խորը ժողովրդական շարժում էր՝ ուղղված թուրքական կառավարության և պաշտոնյաների, քուրդ ցեղապետերի և հրոսակների հայահալած քաղաքականության դեմ:

Ազգային կուսակցությունների ստեղծումից հետո ազատագրական շարժումներն առավել կազմակերպված բնույթ ստացան: Մի կողմից տարբերայնորեն առաջացած հայդուկային խմբերը, մյուս կողմից Արևմտյան Հայաստանում իրենց կազմակերպությունները հաստատած ազգային կուսակցությունները հաճախ միավորում էին ուժերը օրըստօրե սաստկացող սուլթանական բռնությունների դեմ: Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների համակողմանի լուսաբանումը հայ պատմաբանների առաջնահերթ խնդիրն էր: Այդ պատվավոր գործը ի կատար ածելու ծանր պարտականությունն իր վրա է վերցրել նաև պատմագիտության դոկտոր Ազատ Համբարյանը, որը լուրջ ներդրում ունի Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության հարաբերությունների, երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների, հայ հասարակական-քաղաքական մտքի տարբեր հոսանքների՝ Հայկական հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և բազմաթիվ հարակից այլ հարցերի ուսումնասիրության մեջ: Վերջերս վաստակաշատ պատմաբանը լույս ընծայեց «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.)» լայնածավալ մենագրությունը, որը փաստորեն նախկին մենագրության առաջին մասն է և, այդպիսով, ամբողջանում է արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պատմությունը 1898-1914 թթ. ժամանակահատվածի համար:

Մենագրությունը շարադրված է արխիվային և տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության և պարբերական մամուլի ընձեռած հարուստ նյութերի հիման վրա: Աշխատությունը հիմնականում բաժանված է 10 մասի (չհաշված նախաբանը և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը): Մեր կարծիքով, աշխատությունը փաստորեն սկսվում է «Հայ հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշումը 1890-ական թվականների կոտորածներից հետո» մասով, որովհետև աշխատության առաջին երկու մասերը 1898-ից առաջ ծավալված իրադարձություններն են, 1895-96 թթ. հայկական կոտորածները, սուլթանական կառավարության հայահալած քաղաքականության սաստկացումը, ապա արևմտաեվրոպական պետությունների և միջազգային դեմոկրատիայի դիրքորոշումը արևմտահայ ազատագրական շարժումների նկատմամբ: Այդ երրորդ մասը իր մեջ խիստ ամփոփ, բայց և տարողունակ ներկայացնում է հայ հասարակական-քաղաքական բոլոր (կամ գրեթե բոլոր) ուժերի դիրքորոշումը: Հարցի քննարկումն սկսելով եկեղեցու տարբեր աստիճանի սպասավորների գործունեության վերլուծությամբ, հեղինակը հանգամանորեն գնահատում է Մաղաքիա Օրմանյանի գործունեությունը: Այդ գնահատականը բավականին լրջմիտ է. ո՛չ գովերգում, ո՛չ էլ պարսավանք ու ժխտում, այլ իրադարձությունների օբյեկտիվ շարադրանք: Օրմանյանից հետո հեղինակը զատում է «ստորադաս» հոգևորականների երկու խումբ. առաջինի մեջ էին մտնում այն հոգևորականները, որոնք, «տարվելով իրենց գծած շահերով, դարձան օսմանյան

տիրակալների կամակատարները»: Մյուս խմբին պատկանում էին այն հոգևորականները, որոնք «սատարում էին» կամ «գլխավորում» արևմտահայ ազատագրական շարժումները: Լիովին համաձայնելով այդ տեսակետի հետ, ափսոսում ենք, որ հայրենանվեր հոգևորականներից նշվում է միայն Վարգան վարդապետ Հակոբյանը, մինչդեռ նրանց շարքը կարելի էր շարունակել նախ՝ ավելի բարձրաստիճան պայծառ դեմքերով, ինչպես եպիսկոպոս Ներսես Խարախանյանը, ապա Մկրտիչ Խրիմյանը, որը թեև այդ ժամանակ արդեն կաթողիկոս էր, սակայն սերտ կապեր ուներ արևմտահայ ազատագրական շարժման թե՛ շարքային և թե՛ ղեկավար գործիչների, նույնիսկ տարբեր կուսակցությունների հետ, ապա և շարքային բազմաթիվ հոգևորականներով:

Հանգամանորեն է քննարկվում հայ քաղաքական կուսակցությունների գիրքորոշումը: Ինչպես և պետք էր սպասել, սկզբում վերլուծվում է Արմենական կուսակցության դիրքորոշումը, ծրագրերը և գործունեությունը, այն հասցնելով մինչև նրա ձուլումը արևմտահայ իրականության մեջ առաջացած նոր՝ «Հայ սահմանադրական ռամկավարների» կուսակցության հետ: Մանրամասն քննարկված է նաև Հնչակյան կուսակցության դիրքորոշումը: Հեղինակի բերած փաստերն ապացուցվում են այդ կուսակցության հրատարակած հարուստ մամուլի («Նոր կյանք», «Մարտ», «Ձայն հայրենյաց», «Ազատ բեմ». «Պահակ» և այլն) վկայակոչումներով: Հեղինակը մանրակրկիտ վերլուծության է ենթարկում հին ու նոր (վերակազմյալ) հնչակյանների վարքագիծը, թվարկում նրանց տարաձայնությունները և դրանց առաջացման օբյեկտիվ պատճառները: Քանի որ ՀՅ Դաշնակցության ծավալած գործունեությունը ընդգրկել է ավելի լայն ոլորտներ, հեղինակը, շարադրանքի առյուծի բաժինը իրավացիորեն հատկացրել է այդ կուսակցության գործելակերպին, հանգամանորեն անդրադարձել նրա ընդհանուր ժողովներում քննարկված ազգային-ազատագրական պայքարի ու շարժման խնդիրներին, Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր նահանգներում նրա կազմակերպած շարժումներին. ահաբեկչական գործունեությանը. Աբդուլ-Համիդի դեմ կատարած մահափորձին. կուսակցության ղեկավարած պարտիզանական պայքարին. զինատար խմբերի միջոցով Արևմտյան Հայաստան զենք ներկրելու հաջող և անհաջող փորձերին: Առանձնակի հետաքրքրությամբ են ընթերցվում ՀՅԴ-ի ու միջազգային սոցիալիստական բյուրոյի համագործակցությանը ու եվրոպական սոցիալիստական և բանվորական շարժման ուշադրությունը հայ ժողովրդի վիճակի վրա բևեռելու նպատակով II ինտերնացիոնալի Շտուտգարտի կոնֆերանսին ՀՅԴ-ի մասնակցությանը վերաբերող հատվածները: Պետք է նշել մի հանգամանք. հայկական բոլոր կուսակցությունների աչքի ընկնող անդամները կամ պատմագիրները շարադրել են և քննարկել նրանց գործունեության բոլոր շրջափուլերը: Սակայն այդ հեղինակները ունեցել են նաև աչառու կեցվածք և դրսևորել կողմնակալ դիրքորոշում: Գրախոսվող գրքում առաջին անգամ այդ բոլոր կուսակցությունների գործունեությունը ազգային-ազատագրական շարժումների ասպարեզում ներկայացվում և քննարկվում է մի ամբողջական աշխատության մեջ և, ամենակարևորը, այդ ամենն արվում է անաչառ, անկողմնակալ, օբյեկտիվ և գիտական բարեխղճությամբ: Թերևս նման դնահատական կարելի է տալ նաև «Հայդուկային շարժումները: Գյուղացիական ու զինվորական հուզումները» մասի վերաբերյալ: Արտերկրում ստեղծվել է մեծ քանակությամբ պատմական գրականություն առանձին-առանձին համարյա բոլոր անվանի հայդուկների մասին: Բացի այն, որ հեղինակն օգտագործել է այդ բոլորը, դրանց հետ նաև մեր անվանի պատմաբանների հետազոտությունները, նա կարողացել է նոր խոսք ասել, ավելացնել նոր փաստեր, որոնք ձեռք է բերել հիմնականում Ռուսաստանի Արտաքին Քաղաքականության Արխիվի տարբեր ֆոնդերից և հարուստ պարբերական մամուլի էջերից: Այդ նյութերի մեծ մասը փաստորեն առաջին անգամ է դրվում դիտական շրջանառության մեջ: Մի փոքրիկ դիտողություն. չնայած այդ մասը վերնագրված է «Հայդուկային շար-

ժումները: Գյուղացիական և զինվորական հուզումները», սակայն նրա գերակշռող մասը (էջ 167-201) նվիրված է հայդուկներին, 3 էջ գյուղացիական հուզումներին (էջ 201-204), կես էջ քաղաքային բնակչությանը և ոչ մի տող զինվորական հուզումներին: Ըստ երևույթին, առավել ճիշտ կլիներ խորագրում նշել միայն հայդուկային շարժման մասին:

Նոր փաստերով են գրված «Սասունի 1904 թ. գոյամարտը» և «Դիմադրական կռիվները Սասունի գոյամարտից հետո» մասերը, որտեղ, նշելով տարբեր հեղինակների բերած փաստերը և թվերը, հեղինակը համադրում է դրանք և տալիս իր առավել ճշտված, թիվը և դնահատականը: Հեղինակի տքնաջան աշխատանքի շնորհիվ հավաքված փաստերը հարստացնում են մեր դիտելիքները զինատար խմբերի, նրանց ղեկավարների՝ Կայծակ-Վաղարշակ Բաղդասարյան, Թորդոմ-Թուման Թումանյանց, Որսորդ, Լևոն Քալանթարյան, Դայլ Վահան-Մինաս Դոլբաշյան, և բազմաթիվ այլ արժանավոր ու անձնազոհ հերոսների մասին: Այդ մասում առավել հանգամանալից է քննարկված ՀՅԴ-ի տեղական կազմակերպությունների ծավալած գործունեությունը, այդ կուսակցությանն անդամագրված անվանի գործիչների անձնազոհ պայքարը (Հրայր-Արմենակ Ղազարյան, Հեսու և Դժոխք-Վարդան Հակոբյան, Գևորգ Զավուշ և ուրիշներ): Փաստորեն, այս մասը հայդուկային շարժման մի շրջանն է՝ ՀՅԴ-ի ղեկավարության ներքո: Առանձին էջեր են հատկացված այդ կուսակցության Վասպուրականի կենտրոնի գործունեությանը, նրա հետևողական պայքարին հայ գյուղացիներին աղայական լծից ազատագրելու համար:

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների հաջողության գրավականը կարող էր լինել Արևմտյան Հայաստանում բնակվող մյուս ժողովուրդների (Թուրքեր, քրդեր, ասորիներ) վերաբերմունքը դրա նկատմամբ: Առանց այդ հարցերի պարզաբանման թերի և միակողմանի կլիներ արևմտահայ ազգային-ազատագրական շարժմանը վերաբերող հարցերի ողջ համակարգը: Այդ խնդրի գիտակցությամբ աշխատությունը լրացվել է համապատասխան մասերով: Դրանցից առաջինը հայ-թուրքական հարաբերությունների քննարկումն է մինչև 1908 թ. հեղաշրջման նախօրյակը: Այդ մասը հետաքրքիր է նրանով, որ քննարկում է թուրքական սուլթան Աբդուլ-Համիդի հայ քաղաքական կուսակցությունների հետ բանակցություններ վարելու և նրանց իր քաղաքական նպատակների համար օգտագործելու փորձերը: Այդ գաղափարի կենսագործման համար թուրքական սուլթանը բանակցությունների միջնորդի գերը հատկացրեց պետական ապարատում դիրքեր գրաված հայ բարձրաստիճան պաշտոնյաներին: ՀՅԴ-ի և հնչակյանների բանակցությունները սուլթանի հետ վերջացան անարդյունք, քանի որ նրանք զգացին, որ վերջինի խոստացած բարենորոգումները երբեք չեն կենսագործվելու և իրենք չեն կարող գործիք լինել սուլթանի ձեռքին: Ավելի երկարատև էին XIX դարի վերջին և XX դարի սկզբին երիտասարդ թուրքերի հայ քաղաքական կուսակցությունների հետ մերձեցման գնալու քայլերը: Հեղինակը մանրակրկիտ քննարկում է սուլթանին ընդդիմադիր թուրքական տարբեր ուժերի գործելակերպը և նպատակները: Մի կողմից Թուրքիայում ուժեղ կենտրոնաձիգ պետություն ստեղծելու գաղափարը, մյուս կողմից ապակենտրոնացման նկրտումներ ունեցող թուրքական տարբեր խմբավորումների հակասություններն անընդհատ ուժեղանում էին: Երկու խմբավորումներն էլ բանակցություններ էին վարում ՀՅԴ-ի հետ: Հեղինակը ժամանակի մամուլի նյութերի վրա հենվելով լուսաբանում է համիդյան ռեժիմի դեմ պայքարող ընդդիմադիր բոլոր ուժերի միավորվելու փորձերը և եվրոպական սոցիալիստական ուժերի որոշակի ազդեցության տակ ՀՅԴ-ի այդ ոլորտում գործադրած ջանքերը: Ուշադրություն են գրավում ՀՅԴ-ի և երիտթուրքական կոմիտեների համատեղ խմորատիպ թերթեր հրատարակելու փաստերը («Սաբահյուլ Խայր», «Հյուրիեթ» և «Տիգրիս»): Երիտթուրքերի գործունեությունը չսահմանափակվեց կայսրության թուրքական կենտրոններով և թուրք բնակչության շրջանակներով, այլ ծավալվեց

նաև Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Վասպուրականում, հայ բնակչության շրջանում: Աշխատության մեջ քննարկված է նաև հայ քաղաքական մյուս կուսակցությունների գիրքորոշումը երիտթուրքերի հետ համագործակցելու հարցում. երկար բանակցություններից հետո հնչակյանները վճռականապես հրաժարվեցին այդ մտադրությունից: Քննարկված է մյուս քաղաքական ուժերի վերաբերմունքը ևս, առանձնապես մամուլի պահպանողական և ազատական օրգանների դիրքորոշումը: Փաստորեն այս մասում ամփոփված է քաղաքական տարբեր կուսակցությունների և հոսանքների գիրքորոշումը, բայց սա սոսկ օբյեկտիվ շարադրանք չէ. այլ փաստերի համադրում և սեփական (առավել ճիշտ) գնահատականի դրսևորում:

Քրդական շարժումներին աշխատության մեջ նվիրված է երկու մաս. առաջինը ներկայացնում է քուրդ աղայական վերնախավի, քրդական տարբեր ցեղապետերի հակահայկական քաղաքականությունը, սուլթանի ձեռքին գործիք դառնալը, երկրորդը՝ այս, որ սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությունն իբրև խաղաքարտ ներկայացնելով, քրդական ցեղապետերը դա օգտագործում էին սեփական շահերի համար՝ հսկայական հարստություն դիզելու նպատակով: Այդ մասն արտակարգ հարուստ է դեմքերով ու փաստերով, որոնք նոր էջեր են բացում քրդական շարժումների պատմության մեջ և նորովի մեկնաբանում հայ-քրդական հարաբերությունների խնդիրը: Ակներև է դառնում մի հանգամանք. ճիշտ է, հայ քաղաքական ուժերը և նոր զարգացող քուրդ մտավորականությունը փորձեր էին անում հակահամիդյան շարժման մեջ ներգրավվելու համար, սակայն քրդերը իրենց անկախ պետականությունը, ակներևաբար, ցանկանում էին ստեղծել (ոչ թե վերականգնել) Արևմտյան Հայաստանի տարածքում: Հայ քաղաքական ուժերի բանակցությունները քուրդ աղաների հետ վերջացան անարդյունք, իսկ Տարոնի դաշնակցական ղեկավարությունը «որոշեց մերձենալ քրդական աշխատավոր զանգվածների հետ» և նրանց ջանքերով Տարոնում 20-25 քրդական և հայկական գյուղեր սերտ հարաբերություններ հաստատեցին միմյանց հետ: Սակայն այդ դեպքերն աննշան թիվ էին կազմում այն փաստերի կողքին, երբ քուրդ թե՛ հասարակ ժողովուրդը և թե՛ աղաները բացասական վերաբերմունք էին դրսևորում հայ ազատագրական շարժումների նկատմամբ:

Ա. Համբարյանը մեկ առ մեկ քննարկում է դաշնակցական գործիչների տարբեր կարծիքները: Ներկայացված են հայ ազատագրական շարժման ղեկավար գործիչների (Անդրանիկ, Արամ Մանուկյան, Կոմս, Իշխան, Գևորգ Չավուշ, Ռուբեն Տեր-Մինասյան) հաճախ իրարամերժ դիրքորոշումներն այդ հարցում: Ափսոսանքով ենք նշում, որ համեմատաբար համառոտ է մեկնաբանված հայ-ասորական հարաբերությունների խնդիրը:

Աշխատության վերջին մասը նվիրված է 1905-1908 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի տարածքում տեղի ունեցած հեղափոխական շարժումներին, որոնք ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ինքնատիպ արձագանքներն էին: Ընդարձակ ծանոթագրության մեջ հեղինակը մեկնաբանում է հայ և ռուս բազմաթիվ հետազոտողների տեսակետները 1905-1908 թթ. հուզումների վերաբերյալ, ապա արտահայտում իր գնահատականը յուրաքանչյուր կարծիքի մասին: Բազմաթիվ փաստերով հեղինակն ապացուցում է, որ 1905-1908 թթ. Արևմտյան Հայաստանում «տեղի ունեցած ելույթների շարժիչ ուժերը աշխատավոր զանգվածներն էին՝ արհեստավորները, առևտրականները, կիսապրոլետարական տարրերը, իսկ ղեկավարը՝ բուրժուազիան»: Միանդամայն ճիշտ գնահատական:

Այսպիսով, ընթերցողի դատին է հանձնված մի ամփոփ և ամբողջական աշխատություն արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների մասին: Այն ծանրակշիռ ներդրում է տվյալ հիմնահարցի պատմության ուսումնասիրության բնագավառում:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ